բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի, բաշխողական կենսաթոշակային համակարգի և կուտակային կենսաթոշակային բաղադրիչի վերաբերյալ սոցիալական ցանցերի միջոցով թիրախային լսարանին տեղեկացված պահելու նպատակով՝ Սոցիալական մեդիայի վարում (Facebook, Twitter, Linkedin, Youtube սոցիալական ցանցերում հիմնադրամի պաշտոնական էջերի շարունակական վարում), մասնավորապես՝

- Մշակված ուսուցողական և իրազեկման նյութերի տարածում սոցիալական ցանցերում թիրախային լսարանի շրջանում,

- Առցանց սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացում սոցիալական ցանցերի հատուկ գործիքակազմի կիրառմամբ,

- Առցանց հանրային քննարկումների կազմակերպում հանրային մեծ հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ, բնակչությանը հուզող հարցերի պարզաբանում, ըստ անհրաժեշտության՝ կարծիքների և առաջարկների հավաքագրում և ներկայացում քաղաքականություն մշակողներին,

- Սոցիալական ցանցերում հետադարձ կապի ապահովում քաղաքացիների հետ, ուղղված հարցումների և նամակների պատասխանում՝ ապահովելով առավելագույն սեղմ ժամկետներ (միջինը 10 րոպե՝ հարցումն ստանալուց հետո),

- Նոր օգտատերերի ներգրավում, Հիմնադրամի պաշտոնական էջերի հավանումների թվի և գրառումների ընդգրկվածության ավելացում,

- Սոցիալական ցանցերում նոր թեմատիկ էջերի ստեղծում, ինչպես նաև գործող էջերի առաջխաղացում (promotion)՝ ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և դրա ենթակառուցվածքների պահանջի,

3) Պորտալում տեղադրված բոլոր նորությունների, մամուլիհաղորդագրությունների, հայտարարությունների, առցանց հարցումների տեղադրում և լայն տարածում սոցիալական ցանցերի օգտատերերի շրջանում՝ այդ թվում ապահովելով պորտալի հաճախումների և ներքին էջերի դիտումների թվի ավելացում:

4) Հանրային իրազեկման միջոցառումների, այդ թվում կենսաթոշակային տարեկան համաժողովի նախագծում, կազմակերպում և անցկացում:

• **Ուսումնական ծրագրեր**

Կրթական և ուսումնական ծրագրերը նպատակ ունեն անվճար դասընթացների միջոցով կուտակային բաղադրիչի մասնակիցներին ներկայացնել նոր կենսաթոշակային համակարգը և դրա գործողության մեխանիզմներն ու սկզբունքները: 2017 թվականին նախատեսվող ուսումնական միջոցառումները ներառում են՝

1) կուտակային բաղադրիչի մասնակից հանդիսացող աշխատակիցների կողմից 2016 թվականի կենսաթոշակային տարեկան հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ստանալու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ կենսաթոշակային հաշվի տարեկան հաշվետվությունների ստացման վերաբերյալ դասընթացներ պետական մարմինների՝ կուտակային բաղադրիչի մասնակից հանդիսացող աշխատակիցների հետ:

Նախատեսվում է կազմակերպել և անցկացնել առնվազն 25 դասընթաց կենսաթոշակային հաշվի տարեկան հաշվետվությունների ստացման վերաբերյալ:

2) Քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված հայտերի հիման վրա՝ անվճար դասընթացների կազմակերպում սոցիալական պաշտպանության ոլորտի և կուտակային բաղադրիչի, մասնավորապես՝ կենսաթոշակային հաշվի տարեկան հաշվետվությունների ընթերցման վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),

• **Հեռուստահաղորդումների և իրազեկող հոլովակների պատրաստում**

Սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի, այդ թվում կուտակային կենսաթոշակային համակարգի լուսաբանման նպատակով կպատրաստվեն իրազեկող հաղորդումներ, կմշակվեն իրազեկող հոլովակներ՝ կուտակային կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, կուտակային համակարգի առաջին երեք տարիների գործողության արդյունքների և համակարգին կամավոր միանալու առավելությունների ներկայացման նպատակով:

1) Իրազեկման հաղորդումների և լրատվական ռեպորտաժների պատրաստում հեռուստատեսությամբ հեռարձակելու համար՝ կենսաթոշակային հաշիվներին հետևելու անհրաժեշտության և եղանակների, 1964-1974թթ. ծնված անձանց՝

կուտակային բաղադրիչին կամավոր մասնակցության առավելությունների և այլ արդիական հարցերիվերաբերյալ:

2017 թվականին կպատրաստվեն առնվազն 2 հեռուստահաղորդումներ և առնվազն 1 լրատվական ռեպորտաժ:

2) Ֆինանսական գիտելիքի կարճ անիմացիոն հոլովակների պատրաստում կուտակային կենսաթոշակային համակարգին առնչվող ֆինանսական հասկացությունների և ինստիտուտների վերաբերյալ:

Նախատեսվում է մշակել 7 անիմացիոն հոլովակ:

3) Իրազեկող հոլովակների մշակում << բազմաստիճան կենսաթոշակային համակարգի, կուտակային կենսաթոշակային հաշիվները ստուգելու, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում գրավոր դիմումներ ներկայացնելու, սոցիալական տարբեր ծրագրերից օգտվելու կարգի վերաբերյալ:

2017 թվականին կպատրաստվեն 6 իրազեկող հոլովակներ:

- **<u>Տպագիր իրազեկման նյութերիմշակում</u>**

Տպագիր իրազեկման նյութերի մշակման և տարածման միջոցով կուտակային բաղադրիչի մասնակիցներին գործնական-կիրառական գիտելքիներ կփոխանցվեն կենսաթոշակյաին հաշիվները ստուգելու, կենսաթոշակային ֆոնդ և կառավարիչ ընտրելու/փոխելու վերաբերյալ, մասնավորապես՝

1) Իրազեկող տեղեկատվական պաստառների մշակում՝ կենսաթոշակային հաշիվները ստուգելու եղանակների, կենսաթոշակային ֆոնդ և կառավարիչ ընտրելու/փոխելու, միաժամանակ մի քանի կենսաթոշակային ֆոնդերում միջոցները տարատեսակավորելու վերաբերյալ:

2017 թվականին կմշակվեն և կտպագրվեն3 տիպի պաստառներ, կկազմակերպվի պետական համակարգի կառույցներում պաստառները բաշխելու և տեղադրելու գործընթացը:

2) Տեղեկատվական թերթիկի մշակում և տպագրում կենսաթոշակային հաշիվը ստուգելու վերաբերյալ՝ «Նորք» կենտրոնում իրականացվող դասընթացների մասնակիցներին և այլ հանրային վայրերում քաղաքացիներին տրամադրելու համար:

- **<u>Նույնականացման քարտ կարդացող սարքերի բաշխում և խորհրդատվության տրամադրում քաղաքացիներին</u>**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. հունվարի 16-ի 31-Ն, 2013թ. մայիսի 16-ի 517-Նև 2013թ. հոկտեմբերի 23-ի 1152-Ն որոշումներով սահմանված կարգին համապատասխան՝ «Նորք» կենտրոնը 2017 թվականին կշարունակի իրավաբանական և ֆիզիկական անձանց նույնականացման քարտ կարդացող սարքերի և անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը:

Սույն փաստաթղթով նախատեսված՝ աշխատանքների մասին հանձնման-ընդունման ակտի հետ միասին, յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում ներկայացվելու է նաև իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
2017թ. հունվար	20.12.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556652
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Տնօրեն
Ա. Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
<<15>> փետրվար 2017թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ-ԲԸԱՀԾՁԲ-17/8 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ընթացքում՝ ընդ որում				
		1-ին եռամսյակ	**2-րդ եռամսյակ**	**3-րդ եռամսյակ**	**4-րդ եռամսյակ**	Ընդամենը Տարի
1.	Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման ծառայություններ	7636000	18616000	29596000	44120400	**44120400**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556652
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ/Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Տնօրեն
_____ **Ա. Աբրահամյան**
(ստորագրություն)
Կ.Տ